

## **Հարց**

Քանի՞ օրվա ընթացքում ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձը թույլտվության կորստի դեպքում կարող է դիմել Հանձնաժողով:

## **Պատասխան**

Ջրային համակարգի օգտագործման թույլտվության կորստի դեպքում թույլտվություն ունեցող Անձն այդ նասին հայտարարություն է հրապարակում մամուլում, որից 15 օր հետո դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով նշված հայտարարության հրապարակումը հավաստող փաստաթղթերը: Դիմելու օրվանից 15 օրվա ընթացքում թույլտվություն ունեցող Անձին հանձնվում է թույլտվության կրկնօրինակը: